

Հաշվետվություն գործուղման մասին

- **Գործուղված անձ**

Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Լիանա Փափախյան

- **Երկիր/Քաղաք/Ժամկետ**

Ֆրանսիայի Հանրապետություն, Մարսել, 2023թ. մայիսի 23,24:

- **Հրավիրող կողմ**

«Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիայի (UNECE) համագործակցությամբ

Ֆրանսիայի էկոլոգիական անցման և տարածքային ամբողջականության նախարարության ռիսկերի կանխարգելման գլխավոր տնօրինություն

- **Նպատակը**

Մասնակցություն՝ հանուն բնապահպանական իրավունքի ներդրման և կիրարկման (IMPEL) «Արդյունաբերական վթարներից քաղված դասեր» թեմայով Եվրոպական միության ցանցի 15-րդ սեմինարին:

- **Քննարկված թեմաները**

23.05.2023թ. «Մարսել Շանո» Կոնգրես կենտրոն

Քննարկվեցին՝

- Աղբյուրի կառավարման կարևորությունը թափոնների հետ կապված վթարների կրկնության մեջ

1. Հրդեհ թափոններով լի պահեստում (Սաին Շամա, 13, Ֆրանսիա)

2. Պայթյուն քիմիական թափոնների մշակման կենտրոնում (Լևերկուզեն, Գերմանիա)
  3. Սիլոսի փլուզում թափոնների վառարանում (Թուլուզ, Ֆրանսիա)
- Տեղեկատվական համակարգերի խոցելիությունը և մարտահրավերները
    1. Պարբերական հրդեհներ կոմպոստացման կայանում (Լե դե Յու, Ֆրանսիա)
    2. Բոցավառվող ծծմբի արտահոսք քիմիական գործարանում (Միխ, Ֆրանսիա)
  - Շինարարություն, վերագործարկում, փորձարկում. ռիսկային քայլեր
    1. Հրդեհ կառուցվող Շատելլուրեն պահեստում, Ֆրանսիա
    2. Պայթյուն ազոտի բալոնների լցման գործարանում Միտրի Մորի, Ֆրանսիա
    3. Քսիլոլի արտահոսք Սեն Ֆոն քիմիական գործարանում միավորի վերագործարկման ժամանակ, Ֆրանսիա
    4. Գազի փոխկապակցման կայանի օդային խողովակաշարի պայթյուն, Ար Սուր Ֆորմանս, Ֆրանսիա

24.05.2023թ. «Մարսել Շանո» Կոնգրես կենտրոն

- Շրջակա միջավայրի մոնիտորինգ և արտադրանքի տարրալուծումը ծխում  
Ֆրանսիական մեթոդաբանության ներկայացում
  1. Հրդեհ գործարանում, որը մասնագիտացած է էլաստոմերային թափոնների վերամշակման մեջ, Ջու Ու Էրդ, Ֆրանսիա
  2. Հրդեհ Վենեցիայի քիմիական գործարանում, Իտալիա
- Անհամատեղելի արտադրանք/խառնուրդներ. Ինչպե՞ս խուսափել դրանցից
  1. Քլորի արտահոսք քիմիական տեղամասում (Լե Պոն դե Քլեյ, Ֆրանսիա)
  2. Մահացու ելքով պայթյուն և հրդեհ Քիչեյվե քիմիական գործարանում, Սլովենիա
  3. Պայթյուն սուլֆոնաթթվի պահեստավորման բաքում (Բերթերակ, Ֆրանսիա)

- **Արդյունքները**

Աշխատաժողովը պրակտիկ փորձի փոխանակում էր կողմ երկների՝ ազգային համակարգողների, փորձագիտական խմբի անդամների, պետական համակարգի ներկայացուցիչների, միջազգային փորձագետների համար, որի ընթացքում մասնակիցները փոխանակվեցին առկա լավագույն փորձով, կարիքներով, գործիքներով և առավելություններով:

- **Նշումներ**

Քարտուղարությունը հատուկ շնորհակալություն է հայտնել Հայաստանի Հանրապետությանը աշխատաժողովին մասնակցելու համար:

Աշխատաժողովի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ Կոնվենցիայի քարտուղարության կողմից Հայաստանի Հանրապետությանը տեղեկատվության փոխանցման և խնդիրների ու բացերի ներկայացման վերաբերյալ, ինչը շատ կարևոր է և անհրաժեշտ Ազգային զեկույցի մշակման և ներկայացման հարցում:

Վտանգավոր նյութերի և թափոնների  
քաղաքականության վարչության  
գլխավոր մասնագետ՝

Լ. Փափախյան